օղլու Պօղոս և Յովհաննէս աղայ, Շիշմանեան Յակոբ աղայ, Սավա աղայ, և այլն[1]։

Ու Գ. Էտեայէն էին՝ որ կանուանուէին եղբայր, Տաքէեան Մկրտիչ, Պահճեպան օղլու Գէորգ (եաքը՝ եաքը՝ ամիրայ) և Աբեսիս եղբայր՝ ինանուանեալ հինգ-ամեայ Մերունի մը (գեռ ողջ յՕրթագիւղ), Մարկոս և Կարապետ եղբայր, Խոճայ Զաքարիա, Ղուկաս եղբայր և այլն[2]. ու սոնք բազմաթիւ էին, և կը նստէին

ջինէն որուն անունը դրին Հովիւ՝ ի յիշատակ Հովուեանց հին տոհմին.

Այս Հովիւն է երկրորդ նախահայրը Հովուեանց զարմին, որուն ութերորդ թոռն էր ճեզայիրլեան այդ Մկրտիչ Ամիրան՝ ըստ այսմ — Պուղամ ծնաւ Հովիւը, Հովիւ ծն. Թորոսը, Թորոս ծն. Հովիւը, Հովիւ ծն. Սարգիսը, Սարգիս ծն. Թորոսը, Թորոս ծն. Սարգիսը, Սարգիս ծն. Յովհաննէս Ամիրան՝ Մականուանեալ ճեզայիրլի, Յովհաննէս Ամիրայ ծն. վերջին Սարգիսն Ամիրայ, որուն որդին էր, ինչպէս վերև գրած ենք, Մկրտիչ Ամիրա ճեզայիրլի, մեծահոգի և հանճարեղ, այլ անծանահաւան ու քիչ մը անխոհեմ ալ ինչպէս կ'ըսեն, որով յետին աղքատութեան մէջ կնքեց իր վերջին տարիները, և կտակեց յետին աղքատութիւն մը իր կողակիցին ու միւս մօտաւորներուն։ Բազմաթիւ երիտասարդներ իր օգնականութեամբը Եւրոպայի մէջ կրթուեցան. Հասգիւղի մէջ իր ծախքովը մեծ վարժարան մը հիմնուեցաւ և շարունակեցաւ քանի մը տարի, Մաքսի մեծ գործառնութիւններն ինք հեղինակաբար ստանձնեց ու տնօրինեց, երկրագործական ծառարկներու պաշտպան հանդիսացաւ նաւահանգիստին մէջ նոր կամուրջի մը շինութեան գլուխ կեցաւ. իր առատաձեռնութիւնը և սալթանաթը չափ չունէր կ'ըսեն, որ վերջապէս գլխաւոր պատճառներն եղան իր արագ նուազումին և անկումին։

1. Ամիրայք, էջ 4։
2. » » 5–6։